ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՆՈՒՇ ԱՎԵՏԻՔԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Ադրբեջանի ժողովրդական ու խորհրդային հանրապետությունների ստեղծումը և ադրբեջանցի էթնոսի կազմավորման գործընթացը 1920-1930-ական թթ.

Է.00.02 «Համաշխարհային պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ – 2023

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում:

**Գիտական ղեկավար՝**

պատմական գիտությունների դոկտոր
**Ա. Հ. Հակոբյան**

**Պաշտոնական ընդդիմախոսներ՝**

պատմական գիտությունների դոկտոր
պրոֆեսոր **Գ. Ս. Ստեփանյան**

պատմական գիտությունների թեկնածու
**Գ. Գ. Այվազյան**

**Առաջատար կազմակերպություն՝ Երևանի պետական համալսարան**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2023 թ. դեկտեմբերի 25-ին, ժամը $14^{30}$-ին ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՀ-ի 006 «Համաշխարհային պատմություն» մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ 0019, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2023 թ. նոյեմբերի 13-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտքարտուղար՝

պ.գ.թ., դոցենտ Գ. Մարգարյան

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

### Հետազոտության թեմայի արդիականությունը

Ընտրված թեմայի արդիականությունը պայմանավորված է Արևելյան Այսրկովկասի վերջին մեկ ու կես հարյուրամյակի էթնո-քաղաքական իրողությունների ուսումնասիրության անհրաժեշտությամբ, որն առավելապես բխում է այն կեղծ-գիտական թեզերից, որոնք խորհրդային և հատկապես՝ հետխորհրդային շրջանում առաջ է քաշում ադրբեջանական պատմագիտությունը՝ ծառայելով պետության ներքին, իսկ առավել մեծ ծավալով՝ արտաքին օրակարգին: Հենց այդ թեզերն են Ադրբեջան պետության արմատները հասցնում հնագույն ժամանակներ՝ մինչև Մաննա և Մարաստան, իսկ ադրբեջանցի էթնոսի կազմավորման վերաբերյալ շրջանառվող թեզերը միմյանց չեն զիջում Արևելյան Այսրկովկասում թյուրք տարրի գոյության վաղ թվագրության և ադրբեջանցիների բնիկացման փորձերի հարցում: Նման թեզերը պարունակում են հարևան երկրների ու ժողովուրդների պատմության և մշակույթի յուրացման սպառնալիք ինչպե՛ս անցյալում, այնպե՛ս էլ այսօր: Մասնավորապես, Իրանական Ատրպատական-Ադրբեջանի թյուրքալեզու բնակչության և ներկայիս Ադրբեջանի Հանրապետության բնակչության էթնիկ նույնացման փորձերը (երկու Ադրբեջանների պարզունակ տեսությունը), Արցախի և Հայաստանի Հանրապետության տարածքում հայ բնակչության եկվորության, աղվանական ժառանգության յուրացման, պարսկական մշակույթի և պետականության (մասնավորապես՝ Սեֆյան պետության) ադրբեջանականացման փորձերը, պետական մակարդակով Ադրբեջանում քարոզվող հակահայկականությունը հրամայական են դարձնում թե՛ Ադրբեջան պետության ստեղծման, թե՛ Խորհրդային Միության կազմում գոյության հանգամանքների (հետևապես՝ խորհրդային ազգային քաղաքականության ազդեցությունը ադրբեջանցի էթնոսի կազմավորման գործընթացի վրա) մանրամասն ուսումնասիրությունը:

### Ատենախոսության նպատակը և խնդիրները

Ատենախոսության մեջ առաջադրել ենք հետևյալ գլխավոր նպատակը. ուսումնասիրել Ադրբեջանի ժողովրդական[1] ու խորհրդային

---

[1] Գիտական գրականության մեջ լայն կիրառություն ունի «Ադրբեջանի *դեմոկրատական* հանրապետություն» եզրույթը: Ադրբեջանում մեծ ծավալով քարոզվում է 1918-1920 թթ. գոյություն ունեցած հանրապետության՝ իբրև թե Արևելքի մահմեդական ժողովուրդների մեջ առաջին դեմոկրատական պետությունը լինելու թեզը, սակայն պետք է նկատենք, որ Ադրբեջանի անկախության հռչակագրի արաբատառ թյուրքերեն բաժնում պետության անվանումը հետևյալն է՝ *Azərbaycan Xalq Cümhuriyyəti (*آذربایجان خالق جومهوریتی*)*, որի «*Xalq*»

հանրապետությունների ստեղծումը և ադրբեջանցի էթնոսի[2] կազմավորման գործընթացը 1920-1930-ական թթ.: Հետազոտության այդ նպատակին հասնելու համար սահմանվել են հետևյալ խնդիրները՝

- Ուսումնասիրել Արևելյան Այսրկովկասի թյուրքալեզու մահմեդական բնակչության շրջանում էթնոհամախմբման նախադրյալների առաջացումը XIX դարում, մասնավորապես՝ ռուսական տիրապետության հաստատումից հետո

---

բաղադրիչը թարգմանվում է ոչ թե «ժողովրդավարական», այլ «ժողովրդական»: Այս պատճառով առավել նպատակահարմար ենք գտնում ատենախոսության մեջ կիրառել Ադրբեջանի ժողովրդական հանրապետություն անվանաձևը: Իսկ առհասարակ՝ մյուս փաստաթղթերում և անգամ ելքի անձնագրերում պետության անվանումն ուղղակի նշված է Ադրբեջանի հանրապետություն (Azərbaycan Cümhuriyyəti, آذربایجان جمهوریتي): Ինչ վերաբերում է ադրբեջանական քարոզչամեքենայի՝ Արևելքի առաջին դեմոկրատական պետությունը լինելու պնդմանը, ապա պետք է նշենք նաև, որ 1917 թ. նոյեմբերին Ղրիմի թաթարների կողմից ստեղծվել էր Ղրիմի ժողովրդական հանրապետությունը՝ Ղրիմի թաթարների պետությունը, որը կարճ կյանք ունեցավ՝ մինչև 1918 թ. փետրվար, երբ վերացվեց խորհրդային իշխանության կողմից, իսկ ժողովրդավարական հաստատությունների (տվյալ պարագայում՝ պառլամենտի) ֆորմալ գոյությունն իրականում բուն ժողովրդավարական բովանդակություն չէր պարունակում:

[2] Անհրաժեշտ է նաև պարզաբանել մեր աշխատանքում «էթնոս» եզրույթի ընտրությունը: Արդի պատմա-ազգագրական գիտության մեջ գոյություն ունի բանավեճ «ազգ» և «էթնոս» հասկացությունների, ինչպես նաև դրանց գոյության դիտարկման տարբեր պարադիգմաների շուրջ: Դրանցից յուրաքանչյուրն ունի «ազգի» և «էթնոսի» սեփական ընկալումը: Ուստի չկան այս հասկացությունների՝ բացարձակ ընդունելություն գտած սահմանումներ, գուցե նաև այն պատճառով, որ տարբեր ազգեր ու էթնոսներ անցել են ձևավորման յուրահատուկ փուլերով և ինքնության ցուցիչները հաճախ կարող են չհամընկնել: Այնուհանդերձ, անհրաժեշտ է որևէ ժամանակաշրջան ուսումնասիրելիս հետամուտ լինել տվյալ եզրույթի այն ընկալումներին, որոնք գոյություն են ունեցել քննարկվող ժամանակաշրջանում: Դառնալով 1920-1930-ական թթ. իրողություններին՝ անհրաժեշտ է ընդգծել, որ խորհրդային իշխանությունն էական նշանակություն չէր տալիս էթնոս, ժողովուրդ, ազգություն հասկացությունների տարբերություններին՝ դրանք բոլորն ընկալելով էթնոսի իմաստով՝ որպես պատմականորեն ձևավորված ինքնակա և միմյանցից հստակորեն տարբերվող իրողություններ (ռեալիաներ): Իսկ արևմտյան ազգերը բնորոշվում էին «բուրժուական/կապիտալիստական» մակդիրի հավելմամբ, ընդ որում նրանց պետք է ապագայում զուգահեռվեր «սոցիալիստական ազգը»: Այսինքն՝ խորհրդային ազգային քաղաքականությունը նպատակ ուներ Միության տարածքում ձևավորել ոչ թե մասնավոր քաղաքացիության հիմքով գործող հանրույթներ, այլ էթնիկ որոշակի ինքնություն ունեցող կայուն խմբեր, որոնցից յուրաքանչյուրը «բնորոշվում է լեզվի, տարածքի, տնտեսական կյանքի և մշակույթի մեջ դրսևորվող հոգեկան կերտվածքի ընդհանրությամբ»: Նման քաղաքականության վառ օրինակներից է Խորհրդային Ադրբեջանը: Այս է պատճառը, որ մեր աշխատանքում ևս պարզապես կիրառվել է էթնոս եզրույթը:

մտավորականության և գրավոր թյուրքալեզվության, մամուլի առաջացումը.

- Ուսումնասիրել 1905-1906 թթ. հայ-թաթարական բախումների ազդեցությունը Արևելյան Այսրկովկասի թյուրքալեզու մահմեդական բնակչության շրջանում էթնիկական նոր դրսևորումների, ընդհանուր թշնամու կերպարի՝ որպես էթնոհամախմբման կարևոր գործոնի առաջացման վրա.
- Ուսումնասիրել XX դ. սկզբին առաջացած քաղաքական հոսանքները, պանթյուրքիզմի և պանիսլամիզմի ազդեցությունն այդ հոսանքների գաղափարախոսությունների և նոր մտավորականության էթնիկական որոնումների վրա.
- Ուսումնասիրել 1917 թ. Փետրվարյան հեղափոխության և Հոկտեմբերյան հեղաշրջման պայմաններում Այսրկովկասի մահմեդականության քաղաքական վարքագիծը.
- Ուսումնասիրել Ադրբեջանի ժողովրդական հանրապետության ստեղծման պայմանները.
- Ուսումնասիրել Ադրբեջանի ժողովրդական հանրապետության գոյության և գործառման հանգամանքները (թուրքական ռազմա-քաղաքական հրամանատարության (1918 թ. մայիս-նոյեմբեր), անգլիական ռազմական առաքելության (1918 նոյեմբեր – 1919 թ. օգոստոս) վերահսկողության և հարաբերական ինքնուրույնության շրջանում (1919 օգոստոս – 1920 թ. ապրիլ).
- Ուսումնասիրել Ադրբեջանի խորհրդայնացման ընթացքը.
- Ուսումնասիրել Խորհրդային Ադրբեջանում 1920-1930-ական թթ. հակախորհրդային շարժումների հիմնական գաղափարական ասպեկտները, բնակչության թուրքամետ ձգտումները և դրանց կանխարգելման համար ձեռնարկված միջոցառումները.
- Ուսումնասիրել Խորհրդային Ադրբեջանի բնակչության էթնիկ կազմը՝ 1921 թ. գյուղատնտեսական, 1926 թ., 1937 թ., 1939 թ. համամիութենական մարդահամարների տվյալների հիման վրա.
- Ուսումնասիրել ադրբեջանցի էթնոսի կազմավորման ընթացքը 1920-1930-ական թթ.՝ այս գործընթացի համատեքստում դիտարկելով խորհրդային իշխանության ազգային քաղաքականությունը և դրա դրսևորումները խորհրդային Ադրբեջանում.
- Ուսումնասիրել ադրբեջանցի անվան ամրագրումը որպես Խորհրդային Ադրբեջանի թյուրքալեզու մահմեդական

տիտղոսակիր բնակչության ընդհանրական անվանում և այդ ամրագրումը պայմանավորող ներքին ու արտաքին գործոնները.
- Ներկայացնել ադրբեջանցի էթնոսի ինքնության կառուցարկման գործընթացը և առանձնահատկությունները:

**Ատենախոսության գիտական նորույթը և կիրառական նշանակությունը**

Ատենախոսության մեջ առաջին անգամ հետևողականորեն և համապարփակ կերպով ուսումնասիրվել ու վերլուծվել են Արևելյան Այսրկովկասում «Ադրբեջան» անվամբ նոր պետության առաջացման ու գոյության, համանուն էթնոսի կազմավորման և ինքնանվան՝ էթնոնիմի, վերջնական հաստատման գործընթացները:

- Նախորդած շրջանի համառոտ ուսումնասիրությամբ մատնանշվել է նախադրյալների այն համախումբը (ռուսական տիրապետության հաստատում, մտավորականության առաջացում, թյուրքալեզու գրականության և մամուլի ստեղծում, հայատյացության դրսևորում, քաղաքական հոսանքների առաջացում), որի ամբողջությունը կազմում է տվյալ տարածքի մահմեդական բնակչության էթնոհամախմբման (էթնոկոնսոլիդացիայի) առաջին փուլը, սակայն չի բավարարում պետության ստեղծման գաղափարական և նյութական պահանջներին:
- Ուսումնասիրելով Ադրբեջանի ժողովրդական հանրապետության ստեղծման պատմությունը՝ մանրամասն պարզաբանվել է, որ այն Առաջին աշխարհամարտի Կովկասյան ճակատում ընթացող պատերազմում ներգրավված մի շարք տարածաշրջանային ու համաշխարհային դերակատարների շահերի բախման և համադրության արդյունք էր: Այս համատեքստում հատկապես շեշտվել է Օսմանյան Թուրքիայի ռազմա-քաղաքական վերնախավի հեռահար ծրագիրը՝ երկրամասի հետ պատմական աղերս չունեցող «Ադրբեջան» անվամբ պետություն ստեղծելով, այն կապող օղակ դարձնել Հյուսիսային Իրանի, Հյուսիսային Կովկասի, Կենտրոնական Ասիայի հետ: Այդպիսով պետք է իրականանար և նյութականացվեր պանթյուրքիզմի ծայրահեղ ազգայնական գաղափարախոսությունը:
- Ադրբեջան պետության կարճատև գոյության համակողմանի ուսումնասիրությամբ ցույց է տրվել, որ իրականում այն ունակ չի եղել ինքնուրույն դիմակայելու արտաքին ու ներքին սպառնալիքներին: Աշխատանքում բազմաթիվ աղբյուրներով փաստվել է, որ, նախապես գտնվելով թուրքական (1918 թ. մայիս – նոյմեբեր), ապա՝ անգլիական (1918 թ. նոյեմբեր – 1919 թ. օգոստոս) փաստացի վերահսկողության

տակ՝ Ֆ. Խան Խոյսկու և Ն. Ուսուբբեկովի գլխավորած 5 կառավարությունները չեն կարողացել լուծել պետության ազգայնացման, մարտունակ բանակի ստեղծման և այլ կենսական խնդիրներ, որոնք էլ բոլշևիկյան վտանգի մեծացմամբ հանգեցրել են անկախության ճգնաժամի:

- Ատենախոսության մեջ հատուկ փորձ է արվել՝ պատասխանելու այն հարցին՝ թե ինչո՞վ էր պայմանավորված Ադրբեջանի՝ որպես ձևական անկախ սոցիալիստական պետության պահպանումը Խորհրդային Ռուսաստանի համար: Ուսումնասիրությամբ պարզաբանվել է, որ 1920-ական թթ. ներբոլշևիկյան քննարկումների և առաջնահերթությունների տիրույթում Ադրբեջանին վիճակվեց դառնալ Արևելքում հեղափոխության տարածման ցատկահարթակը, ինչն էլ պայմանավորեց այս քաղաքական կառույցի գոյատևման շարունակականությունը:
- Հատկապես հետաքրքիր է ռուսաստանյան արխիվային նոր փաստաթղթերի շրջանառմամբ 1920-ական թթ. Ադրբեջանում հակախորհրդային շարժումների և դրանց թուրքամետ գաղափարախոսությունների ուսումնասիրությունը: Այն նոր լույս է սփռում արդեն 1930-ական թթ. խորհրդային իշխանության առաջադրած խնդրին՝ հասնել Ադրբեջանում թյուրքական ինքնության այլացման (ադրբեջանականացման):
- Աշխատանքում 1920-1930-ական թթ. ադրբեջանցի էթնոսի կազմավորման գործընթացը և «ադրբեջանցի» անվան՝ որպես ընդհանրական էթնանուն, ամրագրման հիմնահարցը նորովի ուսումնասիրվել է մի կողմից՝ Թուրքիայում և Իրանում ազգակառուցման գործընթացների, մյուս կողմից՝ խորհրդային ազգային քաղաքականության համակողմանի և փոխկապակցված ամբողջականության համատեքստում:
- Ելնելով հիմնախնդրի արդիականությունից՝ մեծապես կարևորվել է նաև ադրբեջանցի էթնոսի հետագա կառուցարկման խնդիրը ինչպե՛ս պատմության շարադրման նառատիվների, այնպե՛ս էլ առօրյա-մշակութային առումներով:

Աշխատանքը կարող է կիրառական նշանակություն ունենալ ինչպե՛ս Ադրբեջանի պատմության առանձին դրվագների հետազոտման, այնպե՛ս էլ ադրբեջանական կեղծարարության հակադարձման առումով, քանի որ այն լուսաբանում է ադբեջանցի էթնոսի կազմավորման ոչ վաղ անցյալի առանցքային փուլերը: Քննության արդյունքները կարող են կիրառվել գիտահետազոտական այլ աշխատանքներում, ազգագրության,

դիվանագիտության, քաղաքագիտության ոլորտներում: Աշխատանքը կարող է հիմք դառնալ թեմային առնչվող պատմա-քաղաքագիտական նոր հետազոտությունների համար, իսկ համալրման դեպքում կարող է վերածվել բուհական ուսումնական ձեռնարկի:

**Ատենախոսության ժամանակագրական շրջանակները**

Ժամանակագրական առումով ատենախոսությունն ընդգրկում է գլխավորապես 1910-1930-ական թթ.: Նման պարբերացման հիմք են ծառայել 1918 թ. մայիսին Ադրբեջանի ժողովրդական հանրապետության ստեղծումը և 1939 թ. խորհրդային մարդահամարով «ադրբեջանցի» անվան ամրագրումը որպես Խորհրդային Ադրբեջանի թյուրքալեզու մահմեդական տիտղոսակիր ժողովրդի ընդհանրական անվանում: Սակայն անհրաժեշտ է ընդգծել, որ ատենախոսության մեջ անդրադարձ է կատարվել 1918 թվականից շատ ավելի վաղ և 1939 թվականից հետո տեղի ունեցած գործընթացներին ևս, ինչպես, օրինակ՝ թյուրքալեզու մամուլի և գրականության ստեղծում (XIX դ. երկրորդ կես), հայ-թաթարական բախումներ (1905-1906 թթ.), XX դ. սկզբին Արևելյան Այսրկովկասի մահմեդականների շրջանում քաղաքական հոսանքների ստեղծում, ադրբեջանական պաշտոնական պատմագրության ստեղծման փորձեր (1940-ական թթ.), առանց որոնց մեր ուսումնասիրությունը չէր լինի ամբողջական և անհրաժեշտ չափով հիմնավոր:

**Ատենախոսության մեթոդաբանական հենքը**

Ատենախոսության մեթոդաբանական հիմքում ընկած են պատմականության, գիտական անաչառության սկզբունքները: Օգտագործված արխիվային փաստաթղթերի նկատմամբ ցուցաբերվել է քննական մոտեցում, անհրաժեշտության դեպքում կատարվել է աղբյուրների հաղորդած տեղեկությունների հատուկ համեմատում և վերլուծություն: Եւ քանի որ աշխատանքն ունի ոչ միայն պատմա-քաղաքական, այլև էթնո-քաղաքական բնույթ, դրանում որպես տեսական հիմքեր օգտագործվել են թե՛ խորհրդային ազգագրության դրույթները (Յու. Բրոմլեյ, Ն. Չեբոքսարով, Մ. Կրյուկով, Ս. Հարությունով), թե՛ արևմտյան (Է. Սմիթ, Բ. Անդերսոն, Մ. Հրոխ), և թե՛ հայկական (Ա. Նալչաջյան, Լ. Աբրահամյան, Հր. Խառատյան):

**Օգտագործված աղբյուրների և գրականության համառոտ տեսություն**

Ատենախոսությունը շարադրելիս օգտագործվել են ինչպես մեծ քանակությամբ արխիվային փաստաթղթեր, փաստաթղթային ժողովածոներ, հուշագրություններ, ժամանակակիցների վկայություններ, այնպես էլ բազմալեզու գրականություն: Աշխատանքի փաստագրական հիմքը կազմում են Հայաստանի ազգային արխիվի, Հայաստանի

պատմության թանգարանի, Ռուսաստանի Դաշնության պետական արխիվի և Սոցիալ-քաղաքական պատմության ռուսական պետական արխիվի՝ ուսումնասիրվող խնդիրներին վերաբերվող փաստաթղթերը[3]: Աշխատանքի առաջին գլխում տեղ գտած խնդիրների՝ ցարական իշխանության քաղաքականության, գրավոր թյուրքալեզու գրականության ուսումնասիրության համար մեզ կարևոր նպաստ են բերել Վ. Թունյանի՝ Ռուսական կայսրության վարչա-քաղաքական և ազգային քաղաքականությանը նվիրված աշխատությունները, գերմանացի հետազոտողներ Ե.-Մ. Աուխի և Յ. Բաբերովսկու հետազոտությունները, Աբասկուլի-աղա Բաքիխանովի, Մ. Ֆ. Ախունդովի սկզբնաղբյուրային նշանակության երկերը[4]: Այս խնդիրների ուսումնասիրության համար ուղենշային են եղել Վ. Գալստյանի՝ համապատասխան թեմայով գրված թեկնածուական ատենախոսությունն ու հրատարակված հոդվածները, ինչպես նաև այլ հեղինակների աշխատությունները[5]:

Հայ-թաթարական բախումների և մահմեդականների շրջանում դրանց էթնոհամախմբող ազդեցության ուսումնասիրության տեսանկյունից անկյունաքարային նշանակություն են ունեցել իրադարձությունների ականատեսներ Ա-Դո-ի, Ա. Գյուլխանդանյանի, Մ. Վարանդյանի երկերը[6],

---

[3] Հայաստանի ազգային արխիվ, ֆոնդ 200, 275, 163; Հայաստանի պատմության թանգարան, Նորագույն պատմության փաստաթղթային ֆոնդ; Государственный архив Российской Федерации, фонд 130, 5297, 6144; Российский государственный архив социально-политической истории, фонд 17, 80, 85, 558.

[4] **Тунян В. Г.**, Политика самодержавия России в Закавказье, ч. II (1826-1836 гг.); **նույնի՝** Политика самодержавия России в Закавказье, ч. III (1836-1844 гг.); **նույնի՝** Политика самодержавия России в Закавказье, ч. IV (1847-1876 гг.); **Аух Е.-М.**, Между приспособлением и самоутверждением. Ранний этап поисков национальной идентичности в среде мусульманской интеллигенции и возникновение нового общества на юго-восточном Кавказе (1875–1905 гг.), Азербайджан и Россия: общества и государства, Москва, 2001; **Баберовски Й.**, Враг есть везде: Сталинизм на Кавказе, Москва, 2010; **Бакиханов А.**, Гюлистан-Ирам, Баку, 1926; **Ахундов М. Ф.**, Избранные философские произведения, Баку, 1953.

[5] **Գալստյան Վ. Ա.**, ԺԹ դարի երկրորդ կեսին թյուրքալեզու գրավոր մշակույթի ձևավորման դերը Արևելյան Այսրկովկասի մահմեդական բնակչության էթնոհամախմբման գործընթացում, Պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Եր., 2017; **նույնի՝** Արևելյան Այսրկովկասում թյուրքալեզու գրավոր մշակույթի ձևավորումը XIX դ. երկրորդ կեսին, – ԼՀԳ, 2017, № 1; **Մխիթարյան Գ.**, Արևելյան Այսրկովկասի վարչաքաղաքական կազմավորումները ԺԸ դարի երկրորդ կեսին, Եր., 2018; **Aşirli A.**, Azərbaycan mətbuati tarixi: 1875-1920, Baki, 2009; **Akin Ü.**, Çarlik dönemi Rus Azerbaycani'nda eğitim. OPUS, Uluslararasi Toplum Araştirmalari Dergisi, № 8(15), 2018.

[6] **Ա-Դո**, Հայ-թուրքական ընդհարումը Կովկասում (1905-1906 թ.), Եր., Տպարան Այվազեանց և Նազարեանց, 1907; **Գիւլխանդանեան Ա.**, Հայ-թաթարական ընդհարումները Բագուի մէջ, – «Հայրենիք» ամսագիր, № 4, 1933, էջ 126-135, **նույնի՝** Հայ-թաթարական ընդհարումները Բագուի մէջ, – «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1933, № 3 (123), **նույնի՝** Հայ-թաթարական ընդհարումները Բագուի մէջ, – «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1933, № 6 (126), էջ 141-147;

սենատոր Ա. Կուզմինսկու հաշվետվությունը[7], Թ. Վարդանյանի աշխատանքները, ինչպես նաև մամուլի հաղորդումները[8]:

Երկրամասում քաղաքական հոսանքների առաջացումն ուսումնասիրելիս ծանոթացել ենք մի շարք ադրբեջանցի հեղինակների աշխատանքներին[9]: Մուսավաթ կուսակցության պատմության և Վերսալի խաղաղության վեհաժողովում Ադրբեջանի պատվիրակության գործունեության մասին կարևորել ենք Ա. Ռայևսկու երկերը[10]:

Ադրբեջանի ժողովրդական հանրապետության պատմության ուսումնասիրության համար հիմք են հանդիսացել ինչպե՛ս մի շարք փաստաթղթային ժողովածոներ, իրադարձություններին ականատես գործիչների հուշագրություններ[11], այնպե՛ս էլ հայ և օտարազգի

---

**Վարանդեան Մ.**, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան պատմութիւն, Եր., ԵՊՀ հրատ., 1992:

[7] **Кузминский А. М.**, Всеподданнейший отчет о произведенной в 1905 году, по высочайшему повелению, сенатором Кузминским ревизии города Баку и Бакинской губернии, http://elib.shpl.ru/ru/nodes/65967#mode/inspect/page/3/zoom/5 (մուտք՝ 18.04.2021 թ.):

[8] **Վարդանյան Թ. Ռ.**, Թաթարական ազգայնամոլության դրսեւորումներն Անդրկովկասում 20-րդ դ. առաջին տասնամյակում, Եր., 2000; **նույնի՝** Ազգամիջյան հակամարտությունը որպես էթնիկ ինքնության ձեւավորման գործոն (1905-1906 թթ. հայ-թաթարական ընդհարումների օրինակով), – ԼՀԳ, 2003, № 1; **նույնի՝** Азербайджанцы. История одного незавершенного этнопроекта, Москва, 2012; Azeri aggression against Armenians in Transcaucasia (1905-1921), Reports from the U.S. press, Edited by **A. Ketibian**, 2020.

[9] **Багирова И. С.**, Политические партии и организации Азербайджана в начале XX века, Баку, Елм 1997; **Mirza-bala M. Z.**, Milli Azerbaycan harekeri: Milli Az. "Müsavat" halk firkasi tarihi, Berlin, Firka divan tarafindan neşrolunmuştur, 1938; **Ordubadi M. S.**, Qanli illar, Baki, Qanun Nəşriyyati, 2007; **Yaqublu N.**, Müsavat partiyasinin tarixi, Baki, 2012; **Seyid-zade D.**, Azerbaijan in the Beginning of XX Century: Roads Leading to Independence, Baku, 2011.

[10] **Раевский А.**, Английская интервенция и Мусаватское правительство, Баку, 1927; **նույնի՝** Большевизм и меньшевизм в Баку в 1904-5 г.г., Баку, АзГНИИ, 1930; **նույնի՝** Мусаватское правительство на Версальской конференции, Донесения председателя делегации Азербайджанской Республики на Версальской конференции (март-декабрь 1919 г.), Баку, АзГНИИ, 1930.

[11] Азербайджанская Демократическая Республика. Внешняя политика, (документы и материалы), Баку, 1998; Декреты Советской власти. Т. I. Москва, Гос. изд-во полит. литературы, 1957; Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, Тифлис, Типография правительства Грузинской республики, 1919; Documents on British foreign policy 1919-1939, Vol. III, 1919, London, Oxford University press, 1949; Osmanli Devleti ile Azerbaycan Türk Hanliklari arasindaki münâsebetlere dâir arsiv belgeleri. Karabag-Susa, Nahçivan, Bakü, Gence, Sirvan, Seki, Revan, Kuba, Hoy, Ankara, TC Basbakanlik Devlet Arsivleri Genel Müdürlügü, 1993; Azərbaycan Xalq Cümhuriyyəti (1918-1920), Parlament (Stenoqrafik hesabatlar). I cild, Baki, "Azərbaycan", 1998; **Байков Б.**, Воспоминанія о революции въ Закавказьи (1917-1920 г.г.), Архивъ русской революцiй, т. 9, Берлин, 1923; **Людендорф Э.**, Мои воспоминания о войне 1914-1918 гг. Т. 2, Москва, Гос. издат., 1924; **Хейфец С. Я.**, Закавказье в первую половину 1918 г. и Закавказский Сейм, – «Былое», № 21, 1923.

հեղինակների աշխատություններ, որոնցից հատկապես հիշատակելի են Թ. Սվենտոխովսկու և Վ. Մուխանովի գրքերն ու հոդվածները[12]: Ե՛ւ ադրբեջանցի, ե՛ւ օտարազգի հեղինակների հաղորդած տեղեկություններն ու դրանց մեկնաբանությունները դիտարկել ենք հատուկ օբյեկտիվ քննության սկզբունքի շրջանակներում: Մեր ուսումնասիրության արծարծած խնդիրներին հայրենի հեղինակներից անդրադարձել են նաև Գ. Ստեփանյանը, Դ. Բաբայանը[13]: Ատենախոսության շրջանակներում օգտագործվել են Ադրբեջանի ժողովրդական հանրապետության ղեկավարներ Մ. Է. Ռասուլզադեի, Ա. Մ. Թոփչիբաշևի՝ տարբեր տարիներին գրված հոդվածները և նամակները[14]:

Նշենք, որ Ադրբեջանի ժողովրդական և խորհրդային հանրապետությունների պատմությունը մենք արծարծել ենք լոկ այնքանով, որքանով դա վերաբերում է պետականաշինության և էթնոհամախմբման հարցերին: Այսինքն՝ մեծամասամբ քննության չենք ենթարկել, օրինակ՝ սահմանային խնդիրները, բանվորական և ագրարային կամ ազգային փոքրամասնությունների հարցերը: Խորհրդային ազգային քաղաքականության ուսումնասիրության ժամանակ կարևոր են ինչպե՛ս անմիջապես Վ. Լենինի և Ի. Ստալինի հոդվածներն ու ելույթները, այնպե՛ս էլ բոլշևիկյան կուսակցության ազգային խնդրի լուծման վերաբերյալ հրատարակությունները[15]: Խնդրին վերաբերող եվրոպական

---

[12] **Swietochowski T.**, Russian Azerbaijan, 1905-1920, Cambridge, 1985; **նույնի**՝ Russia and Azerbaijan: A borderland in transition, New York, Columbia University press, 2009; **նույնի**՝ (**Свентоховский Т.**) Русское правление, модернизаторские элиты и становление национальной идентичности в Азербайджане, Россия и Азербайджан, Вып 4-й: Общество и государства, Москва, 2001; **Муханов В., Волхонский В.**, По следам Азербайджанской Демократической Республики, Москва, «Европа», 2007, **Муханов В.**, Кавказ в переломную минуту (1917-1921), Москва, Модест Колеров, 2019.

[13] **Ստեփանյան Գ.**, Բաքու քաղաքի հայության պատմությունը (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), Եր. , 2011; **Stepanyan G.,** The "Great Azerbaijan" project in the Pan-Turkish concept of the Musavatists, Young Turks and Kemalists, Review of Armenian studies, 2022 № 1 (28), **Бабаян Д.**, Формирование азербайджанского народа (от татаризации до азербайджанизации) в контексте административно-территориальной и этнонациональной геополитики в Закавказье в XIX-XX вв., – «Страны и народы Ближнего и Среднего Востока» [ՄՄԱԵժ], т. XXXII (1), Ер., 2019, с. 156-224.

[14] **Rəsulzadə M. Ə.**, Əsərləri, I cild (1903-1909), Baki, 2014; **նույնի**՝ Əsərləri, II cild (1909-1914), Baki, 2001; **նույնի**՝ Əsərləri, III cild (1915-1916), Baki, 2012; **նույնի**՝ Azərbaycan Cümhuriyyəti, Baki, 1990; **Тобчибашев А. М. Б.**, Журналистская деятельность 1898-1914, I том, Баку, 2014; **նույնի**՝ Избранное, в 4-х томах, т. 2, Баку, 2015.

[15] **Ленин В. И.**, Полное собрание сочинений, т. 24, Москва, 1973; **նույնի**՝ Сочинения, т. 20, Москва, 1948; **Ստալին Ի.**, Ազգային հարց. Հոդվածներ, ճառեր, Մոսկվա, 1927; **նույնի**՝ Երկեր, հտ. 3, Եր., 1948; **նույնի**՝ Марксизм и национально-колониальный вопрос, Москва, 1934; **նույնի**՝ Сочинения, 5-е изд., Москва, 1952; Политика советской власти по национальным делам

հետազոտողների աշխատանքները հաճախ աչքի են ընկնում ընդգծված հակառուսականությամբ, կամ նկատվում է պատմաժամանակագրական իրողություններից շեղման միտում, ինչպես, օրինակ՝ Օ. Ալշտադտի և Բ. Շեֆֆերի մոտ է, ովքեր Ադրբեջան անվանումը կիրառում են Արևելյան Այսրկովկասի նկատմամբ շատ ավելի վաղ շրջանում, քան իրականում կարելի է: Բ. Շեֆֆերն առհասարակ առաջ է քաշում ներկայիս Ադրբեջանի և Իրանական Ատրպատականի թյուրքախոս բնակչության էթնիկ նույնության հայեցակարգը, ինչը ծառայում է Ադրբեջանի ներկայիս շահերին[16]: Փոխարենը՝ ադրբեջանական ինքնության ձևավորման գործընթացի վերաբերյալ յուրահատուկ մոտեցումներ են պարունակում Հ. Յըլմազի հոդվածները, որոնց գիտական կարևորությունը մեծացնում են Ադրբեջանի Հանրապետության պետական արխիվների փաստաթղթերի ծավալուն օգտագործումը և հեղինակի բավականին անաչառ մեկնաբանությունները[17]: Առանձին կարևորություն են ներկայացնում վիճակագրական տվյալները: Ատենախոսության մեջ օգտագործվել են Ռուսական կայսրության 1897 թվականի ու խորհրդային 1921 թ., 1926 թ., 1937 թ. և 1939 թ. մարդահամարների տվյալները[18]:

Աշխատանքի տեսական հիմքերն ապահովել են XX դարի երկրորդ կեսի խորհրդային ազգագրական դպրոցի ներկայացուցիչներ

---

за три года. 1917-IX-1920, Москва, 1920; Национальная политика. ВКП(б) в цифрах, Москва, 1930.

[16] **Altstadt A.**, The Azerbaijani Turks: Power and Identity under Russian Rule, Stanford, 1992; **Sheffer B.,** Borders and Brethren, Iran and the Challenge of Azerbaijani Identity, Cambridge, 2002.

[17] **Yilmaz H.**, The construction of Azerbaijani identity under the shadow of Iran and Turkey, National identities in Soviet Historiography, London and New York, Taylor & Francis, 2015; **նույնի՝** The Soviet Union and the Construction of Azerbaijani National Identity in the 1930s, – «Iranian Studies», 46:4; **նույնի՝** The miraculous return of Babek to Azerbaijan, National identities in Soviet Historiography, 1st edition, 2015.

[18] Первая всеобщая перепись населения Российской Империи. Наличное население обоего пола по уездам и городам, с указанием преобладающих вероисповеданий и сословий, Вып. 6, Паровая Типо-Литография Ныркина, 1905; Первая всеобщая перепись населения Российской Империи. Наличное население обоего пола по уездам с указанием числа лиц преобладающих родных языков, Вып. 7, Паровая Типо-Литография Ныркина, 1905; Азербайджанская сельско-хозяйственная перепись 1921 г., Итоги по сельским обществам во вновь образованных уездах АССР, Нагорного Карабаха и по тем (основным) уездам, в которых произошли изменения границ. Том 3, Вып. 17, Баку, 1924; Итоги всеазербайджанской Сельско-хозяйственной переписи 1921 года, Издание Аз ЦСУ, Баку, 1923; Всесоюзная перепись населения 17 декабря 1926 г., краткие сводки, Вып. IV, Москва, 1928; Всесоюзная перепись населения 1937 года: Общие итоги. Сборник документов и материалов, Москва, 2007; Всесоюзная перепись населения 1939 г.: Основные итоги, 1992.

Յու. Բրոմլեյի, Մ. Կրյուկովի, Ս. Բրուկի, Ն. Չեբոքսարովի Ս. Հարությունովի և այլոց տեսական մշակումները[19]:

Էթնոսների և ազգերի կազմավորման արևմտյան հետազոտողների մոտեցումները ևս հաշվի են առնվել[20]: Կարևորվել են էթնիկական հոգեբան Ա. Նալչաջյանի, ազգագրագետներ Լ. Աբրահամյանի և Հ. Խառատյանի դիտարկումները[21]: Մեզ ծանոթ են նաև ադրբեջանցիների էթնոգենեզի վերաբերյալ ադրբեջանցի հեղինակների ինչպե՛ս խորհրդային, այնպե՛ս էլ հետխորհրդային շրջանում լույս տեսած գրքերը, սակայն տվյալ աշխատանքի շրջանակներում դրանք անհատապես վերլուծելու կարիք չենք տեսել[22]:

**Աշխատանքի կառուցվածքն ու բովանդակությունը**

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, եզրակացությունից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից, հավելվածից:

**ՆԵՐԱԾՈՒԹՅԱՆ** մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված են հետազոտության նպատակն ու խնդիրները, գիտական նորույթը, տրված են ժամանակագրական շրջանակները, մեթոդաբանական հիմքը, կիրառական

---

[19] **Бромлей Ю. В.**, Этнос и этнография, Москва, 1973; **նույնի՝** Очерки теории этноса, Москва, 1983; **Брук С. И., Чебоксаров Н. Н.**, Метаэтнические общности, – «Расы и народы»: Ежегодник, № 6, Москва, 1976; **Крюков М. В.**, Эволюция этнического самосознания и проблема этногенеза, – «Расы и народы»: Ежегодник, № 6, Москва, 1976; **Арутюнов С. А.**, Классификационное пространство этнической типологии, – «Советская этнография», 1986, № 4, с. 58-63.

[20] **Андерсон Б.**, Воображаемые сообщества, Москва, 2016; **Anthony D. Smith**, National Identity, Reno – Las Vegas – London, 1991; **Smith A.**, Ethno-symbolism and Nationalism: a Cultural Approach, London, Routledge, 2009; **Хрох М.**, От национальных движений к полностью сформировавшейся нации: процесс строительства наций в Европе, – «Нация и национализм», Москва, 2002.

[21] **Նալչաջյան Ա.**, Էթնիկական հոգեբանություն, Եր., «Զանգակ-97», 2001; **Աբրահամյան Լ. Հմ.**, Ազգային ինքնության հաստատման չորս հարացույցները, – «Ինքնության հարցեր». տարեգիրք, Եր., «Զանգակ-97», 2002; **Խառատեան Հ.**, «Ադրբեջանցիները», «Կովկասալեզուները» և «Իրանալեզուները». ինքնութեան զարգացումներն Ադրբեջանում, – «Հանդէս Ամսօրեայ», Վիեննա-Եր., 2012, սն. 271-335:

[22] Տե՛ս **Алекперов А. К.**, Исследование по археологии и этнографии Азербайджана, Баку, 1960; **Ямпольский И.**, Древняя Албания в III-I вв. до н. э., Баку, 1962; **Буниятов З. М.**, Азербайджан в VII-IX вв., Баку, 1965; **Гейбуллаев Г.**, К этногенезу азербайджанцев, Баку, 1984; **Мамедова Ф. Дж.**, Политическая история и историческая география Кавказской Албании (III в. до н. э. – VIII в. н. э.), Баку, 1986; **Сумбатзаде А. С.**, Азербайджанцы – этногенез и формирование народа, Баку, 1990; **Балаев А.**, Азербайджанская нация: основные этапы становления на рубеже XIX-XX вв., Москва, 2012.

նշանակությունը, օգտագործված աղբյուրների և գրականության տեսությունը:

**Առաջին գլուխը՝ «ԹՅՈՒՐՔԱԼԵԶՈՒ ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԷԹՆԻԿ ՀԱՄԱԽՄԲՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍՈՒՄ XIX ԴԱՐՈՒՄ ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ. ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ»,** բաղկացած է երեք ենթագլուխներից:

**Առաջին ենթագլխում՝ «Արևելյան Այսրկովկասի մահմեդական բնակչության էթնիկ համախմբման նախադրյալների առաջացումը Ռուսական կայսրության իշխանության հաստատումից հետո: Գրավոր թյուրքալեզվությունը»,** ուսումնասիրվել են Արևելյան Այսրկովկասի նկատմամբ ռուսական տիրապետության հաստատման էթնո-քաղաքական հետևանքները, մասնավորապես՝ ռուսական տիրապետության ազդեցությունը երկրամասի թյուրքախոս մահմեդական բնակչության էթնոհամախմբման գործընթացի վրա: Արևելյան Այսրկովկասի բնակչությունն այդ պահին ուներ բավականին խայտաբղետ էթնիկ կազմ: Տեղաբնիկ կովկասալեզուների (ուդիներ, լեզգիներ, ավարներ ևն), իրանալեզուների (թալիշներ, թաթեր, պարսիկներ, քրդեր) կողքին նախորդ դարերում տեղի ունեցած էթնիկ տեղաշարժերի հետևանքով բնակություն էին հաստատել բավականին մեծաքանակ թյուրք-օղուզական, թուրքմենական ծագման ցեղեր: Վերջիններիս շրջանում էթնոհամախմբումը տվյալ պահին գտնվում էր սաղմնային վիճակում, բացակայում էր հավաքական էթնանունը, ավելին՝ տիրապետում էր ցեղային (ցեղանունների արտահայտմամբ) և կրոնական (շիայական) ինքնությունը: Անհամասեռ այս զանգվածը քաղաքական և մշակութային առումով բնականորեն հարում էր իրանական աշխարհին և ռուսական տիրապետության հաստատմամբ աշխարհագրորեն հայտնվեց իր համար ավանդական դարձած իրանական քաղաքական, մշակութային և սոցիալ-տնտեսական միջավայրից դուրս: Ցարական վարչակարգը նման հակումներին վերջ տալու և երկրամասը մշակութապես իրանական աշխարհից կտրելու նպատակով ձեռնամուխ եղավ գրավոր թյուրքալեզվության սատարմանը: Հարդյունս՝ շուտով ձևավորվեց նաև մահմեդական մտավորականությունը, որն իր ստեղծած թյուրքալեզու գրականության, մամուլի էջերում սկսեց արծարծել ինքնության խնդիրներ՝ արձանագրելով մի կողմից՝ «մենք-նրանք» էթնիկ հակադրության առկայությունը, մյուս կողմից՝ «մենք»-ի անորոշությունն ու հստակեցման անհրաժեշտությունը:

**Երկրորդ ենթագլխում՝ «Հայ-թաթարական բախումները և Արևելյան Այսրկովկասի մահմեդական բնակչության շրջանում**

**էթնիկական ինքնության նոր դրսևորումները»,** վերլուծվել է այն խնդիրը, թե ինչպիսի ազդեցություն ունեցան հայ-թաթարական բախումները Այսրկովկասի թյուրքալեզու մահմեդական բնակչության էթնոհամախմբման գործընթացի վրա: Ձևավորվեց ընդհանուր թշնամու կերպար, որն էթնիկ հոգեբանության մեջ վերածվեց հանրույթի միավորման միջոցի: Բախումների շնորհիվ հաղթահարվեց տեղային և ցեղային մասնատվածությունը: Ենթագլխում ուսումնասիրվել են առաջին ազգայնական քաղաքական կազմակերպությունների՝ «Հեյրաթ», «Դիֆայի», «Մուդաֆիե» կուսակցությունների առաջացումը և դրանց գաղափարների վրա պանթյուրքիզմի և պանիսլամիզմի ազդեցությունը:

**Երրորդ ենթագլխում՝ «Արևելյան Այսրկովկասի մահմեդականության շրջանում ձևավորված քաղաքական հոսանքները և դրանց գաղափարախոսությունը XX դարի սկզբին»,** ներկայացվել են ե՛ւ այն հանգամանքները, որոնք նպաստել են գաղափարական հոսանքների առաջացմանը, ե՛ւ այդ հոսանքների ու քաղաքական կազմակերպությունների գաղափարախոսությունները: Դրանք պայմանականորեն կարելի է բաժանել երեք խմբի՝ սոցիալ-դեմոկրատական, ազատական և ազգայնական: Ուսումնասիրվել է երկրամասի մահմեդականության էթնոհամախմբման ընթացիկ՝ միջանկյալ փուլը՝ կրոնականության և ազգայնականության միջև, երբ գիտակցվում էր պատկանելությունը նախ՝ իսլամին, ապա՝ թյուրքական աշխարհին: Ինքնության այսպիսի առկախվածությունը պարարտ հող դարձավ պանթյուրքիզմի և պանիսլամիզմի գաղափարների տարածման համար, որի արտահայտությունը 1911 թ. ստեղծված «Մուսավաթ» («Հավասարություն») կուսակցությունն էր:

Ատենախոսության երկրորդ գլուխը վերնագրված է «**ԱԴՐԲԵՋԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ (1918-1920 ԹԹ.)»:** Այն բաղկացած է երեք ենթագլուխներից:

**Առաջին ենթագլխում՝ «Այսրկովկասի մահմեդականության քաղաքական վարքագիծը 1917 թ. Փետրվարյան հեղափոխության և Հոկտեմբերյան հեղաշրջման պայմաններում»,** ուսումնասիրվել է այդ իրողությունների ազդեցությունը մահմեդական մտավորականության քաղաքական առաջնահերթությունների փոփոխության վրա: Եթե մինչհեղափոխական շրջանում և անգամ Փետրվարյան հեղափոխությունից հետո Այսրկովկասի մահմեդականները, ոգևորված հավանական ազատություններով, դաշնային պետության ստեղծման և հնարավոր ինքնավարության գաղափարով, այնուհանդերձ, պատկերացնում էին իրենց ապագան ռուսական պետության կազմում,

ապա Հոկտեմբերյան հեղաշրջմամբ՝ հետևապես Կովկասյան ռազմաճակատի քայքայմամբ և թուրքական արշավանքով նախապես պասիվ ձգտումները դեպի Թուրքիա ակտիվացան՝ ձեռք բերելով ակնհայտ անջատողականության բնույթ: Այս վարքագիծը դրսևորվեց ինչպե՛ս Այսրկովկասյան կոմիսարիատում, այնպե՛ս էլ Սեյմում:

**Երկրորդ ենթագլխում՝ «Ադրբեջանի ժողովրդական հանրապետության ստեղծումը և Բաքվի գրավումը թուրքական բանակի կողմից»,** մանրամասն ուսումնասիրվել են «Ադրբեջան» անվամբ նոր պետության ստեղծման հանգամանքները: Այս պետության ստեղծումը դիտարկվել է որպես Առաջին աշխարհամարտի Կովկասյան թատերաբեմում ռազմա-քաղաքական իրադարձությունների և մի շարք տարածաշրջանային շահագրգիռ ուժերի շահերի ու հակասությունների բախման արդյունք: Եթե 1918 թ. մայիսին ստեղծված Վրաստանի և Հայաստանի պարագայում պետությունների անվանադրումը չի առաջացնում որևէ տարակուսանք, ապա խնդրահարույց է Արևելյան Այսրկովկասի նկատմամբ «Ադրբեջան» անվան կիրառումը: Ենթագլխում ներկայացվել են տվյալ անվան կիրառման այն հեռահար նպատակները, որոնք հետապնդում էր Օսմանյան կայսրությունը, մասնավորապես՝ Արևելյան Այսրկովկասի հետ իրանական Ատրպատականի հետագա միավորում, Թուրքիայի խնամակալությամբ «Մեծ Ադրբեջանի» ստեղծում՝ որպես Մեծ Թուրանի բաղկացուցիչ մաս և կապող օղակ Թուրքիայի ու Միջին Ասիայի միջև, որը պետք է ներառեր ահռելի տարածքներ ինչպե՛ս բուն Իրանից, այնպե՛ս էլ Հայաստանից՝ գործնականում անհնարին դարձնելով կենսունակ հայկական պետության գոյությունը: Ենթագլխում ուսումնասիրել է նաև Բաքվի գրավման կարևորությունը տարբեր շահագրգիռ կողմերի, այդ թվում Ֆ. Խան Խոյսկու, թերևս, խամաճիկային կառավարության համար: 1918 թ. սեպտեմբերի 15-ին թուրք-ադրբեջանական զորքի կողմից Բաքվի գրավումը սկիզբ դրեց Ադրբեջանի կողմից էթնիկ զտումների պետականահեն պրակտիկային՝ ի դեմս Բաքվի 30 հազար հայության եռօրյա, և այլ շրջանների հայության շարունակական կոտորածի:

**Երրորդ ենթագլխում՝ «Բաքվի անգլիական օկուպացիան: Անկախության ճգնաժամը»,** քննարկված են հետևյալ հիմնախնդիրները. անգլիական վերահսկողության բնույթն ու իրական նպատակները, Փարիզում Ա. Մ. Թոփչիբաշևի պատվիրակության գործունեությունը, Փարիզի խաղաղության վեհաժողովի կողմից Ադրբեջանի անկախության դե-ֆակտո ճանաչման պայմանները, դենիկինյան և բոլշևիկյան գործոնները՝ որպես Ադրբեջանի գոյության համար վտանգներ,

պետության ներքին անկայուն դրությունն ու կառավարական ճգնաժամերը:

Ատենախոսության երրորդ գլուխը կրում է **«ԱԴՐԲԵՋԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ 1920-1930-ԱԿԱՆ ԹԹ.»** վերնագիրը: Գլուխը բաղկացած է երկու ենթագլուխներից:

**Առաջին ենթագլխում՝ «Ադրբեջանի խորհրդայնացման ընթացքը»,** արխիվային փաստաթղթերի և այլ սկզբնաղբյուրների հիման վրա մանրամասն ուսումնասիրվել է ինչպե՛ս Ադրբեջանի խորհրդայնացման բուն գործընթացը, այնպե՛ս էլ մի շարք կարևոր հարցեր, մասնավորապես՝ ինչու պահպանվեց Ադրբեջանը որպես անկախ սոցիալիստական պետություն, եթե կայսրության փլուզմամբ առաջացած մյուս պետական կազմավորումները լուծարվում էին: Ուստի ո՞րն էր Ադրբեջանի ստրատեգիական նշանակությունը խորհրդային իշխանության համար: Ենթագլխում պարզաբանվել է, որ Ադրբեջանի անկախության պահպանման կարևորագույն նպատակն էր հեղափոխության արտահանումն Արևելքի երկրներ: Առերես անկախ և սոցիալիստական Ադրբեջանը՝ թյուրքախոս մահմեդական բնակչության մեծամասնությամբ, սակայն խոշոր այլէթնիկ խմբերի առկայությամբ ու նրանց հավասարության գաղափարի քարոզով կարող էր որպես ինտերնացիոնալիզմի լավ օրինակ ընկալվել Արևելքի ժողովուրդների կողմից: Մանավանդ որ այն սահմանակցում էր Պարսկաստանին, Կասպից ծովով Կենտրոնական Ասիային և մշակութապես կապված էր Թուրքիային: Պատահական չէ, որ 1920 թ. սեպտեմբերի 1-8-ը հենց Բաքվում անցկացվեց Արևելքի ժողովուրդների առաջին համագումարը:

**Երկրորդ ենթագլխում՝ «Հակախորհրդային դրսևորումներն Ադրբեջանում 1920-1930-ական թթ.»,** ուսումնասիրվել են 1920-1930-ական թթ. խորհրդային Ադրբեջանում արձանագրված հակախորհրդային շարժումները, դրանց պատճառները, միտումները, դրսևորման ոլորտները: Առկա փաստական տվյալները թույլ են տալիս պնդել, որ համեմատաբար խաղաղ խորհրդայնացումից անմիջապես հետո Ադրբեջանի բնակչությունը՝ դժգոհ խորհրդային իշխանության քաղաքականությունից, սկսեց բարձրացնել տեղային ապստամբություններ: Խորհրդայնացմամբ բնակչության կենսապայմանների բարելավման ակնկալիքները չարդարացան, ինչն ընդհանուր հիասթափություն առաջացրեց բնակչության շրջանում: Դա ստիպում էր փնտրել այլընտրանք, որպիսին կարող էր լինել քեմալական Թուրքիան: Նման տրամադրությունների առաջացման գործում անմասն չէր նաև մուսավաթական վտարանդի կառավարությունը, ինչպես նաև Թուրքիան, Պարսկաստանը և

Լեհաստանը: Հակախորհրդային դրսևորումներն արձանագրվել են ինչպե՛ս գյուղացիության, այնպե՛ս էլ մտավորականության, երիտասարդության, տնտեսական ոլորտների կառավարման շրջանակներում: Այս ամենի առանցքը կազմում էր խորհրդային իշխանության տապալման գաղափարը, ազգային անկախության վերականգնումը, նաև աներկբա ձգտումները դեպի Թուրքիա: Հատկապես մեծ ուշադրություն է անհրաժեշտ դարձնել վերջին խնդրին, որովհետև այն անմիջականորեն կապված է ինքնության հարցի, դրա վերափոխման անհրաժեշտության հետ:

**Չորրորդ գլուխը՝ «ԱԴՐԲԵՋԱՆՑԻ ԷԹՆՈՍԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ 1920-1930-ԱԿԱՆ ԹԹ.»,** բաղկացած է երկու ենթագլուխներից:

**Առաջին ենթագլխում՝ «Ադրբեջանի բնակչությունը և Խորհրդային իշխանության ազգային քաղաքականությունը 1920-ական թթ.»,** 1921 թ. գյուղատնտեսական և 1926 թ. առաջին Համամիութենական մարդահամարների տրամադրած տեղեկությունների հիման վրա մանրամասն ուսումնասիրվել է ոչ միայն խորհրդային Ադրբեջանի բնակչության էթնիկ կազմը, այլև էթնոսների բնութագրման և դրանց տարբաժանման հիմքում ընկած խորհրդային մոտեցումներն ու մեթոդաբանությունը: Տեսականորեն խորհրդային իշխանությունը տարբերություն չէր դնում «ազգ», «ազգություն», «էթնոս», «ժողովուրդ» հասկացությունների միջև: Եթե այսօր արևմտյան տեսաբանները «ազգ» (nation) եզրույթով բնորոշում են կոնստրուկտիվիստական ընկալմամբ արդյունաբերական դարաշրջանում (կապիտալիզմի պայմաններում) առաջացած և քաղաքացիության հիմքով գործող հանրույթները (դրանք խորհրդային տեսության մեջ կոչվում էին «ժամանակակից» կամ «բուրժուական» ազգեր), ապա խորհրդային տեսության մեջ որպես ազգի/էթնոսի սահմանում ընդունված էր Ի. Ստալինի բանաձևը. «Ազգը մարդկանց պատմականորեն կազմավորված կայուն ընդհանրություն է, որ ծագել է չորս հիմնական հատկանիշների ընդհանրության բազայի, այն է՝ լեզվի ընդհանրություն, տերիտորիայի ընդհանրություն, տնտեսական կյանքի ընդհանրություն և ազգային կուլտուրայի սպեցիֆիկ առանձնահատկությունների ընդհանրության մեջ դրսևորվող հոգեկան կերտվածքի ընդհանրություն»՝ առանց քաղաքացիության կամ պետականության հիշատակման: Դժվար չէ նկատել, որ նման բնորոշում կարող է ունենալ էթնոսը (ժողովուրդը), բայց ո՛չ երբեք ժամանակակից արևմտյան ընկալմամբ ազգը: Խորհրդային ազգային քաղաքականությանը 1920-ական թթ. բնորոշ էր կորենիզացիան

(բնիկացումը), որն ուղղված էր ամեն մի վարչա-քաղաքական միավորում տիտղոսակիր էթնոսի ստեղծմանը: Բավականին բազմատարր էթնիկ պատկեր ունեցող խորհրդային Ադրբեջանում (1921 թ. 61,3% ադրբեջանական թյուրք, 1926 թ. 62,2 %՝ ադրբեջանական թյուրք, մնացյալը՝ իրանալեզու, կովկասալեզու էթնիկ խմբեր, հայեր, ռուսներ ևն) ևս ընթացավ տիտղոսակիր էթնոսի շեշտման գործընթաց:

**Երկրորդ ենթագլխում՝ «Ադրբեջանցի էթնոսի կազմավորման ընթացքը 1920-1930-ական թթ.»**, մանրամասն ներկայացված են այն բոլոր ներքին և արտաքին հանգամանքները, որոնք հանգեցրին 1930-ական թթ. վերջին Խորհրդային Ադրբեջանի տիտղոսակիր բնակչությանը պաշտոնապես «ադրբեջանցի» անվանելուն: Ժամանակագրորեն այն համընկավ խորհրդային ազգային քաղաքականության հարցում միավորման՝ կոնսոլիդացիայի շրջափուլին: Նախկին ինտերնացիոնալիզմից անցում կատարվեց խորհրդային, ապա նաև տեղական ու էթնիկ «նացիոնալիզմի»: Ադրբեջանում փաստացի առկա էր էթնոհամախմբման անավարտ գործընթաց, որի վկայությունը միասնական էթնանվան բացակայությունն էր: Սա «ադրբեջանցի» էթնանվան պետականացման ներքին պատճառն է: Ուսումնասիրվել են նաև արտաքին ազդակները, մասնավորապես՝ Թուրքիայի Հանրապետությունում և Իրանում Մ. Քեմալի և Ռեզա շահի ազգակառուցման գործընթացների ազդեցությունը Խորհրդային Ադրբեջանի էթնո-քաղաքական դիսկուրսում:

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՈՒՄ** ներկայացված են ատենախոսության հիմնական եզրահանգումները.

1. XIX դ. սկզբին Արևելյան Այսրկովկասի թյուրքախոս մահմեդական բնակչությունը գտնվում էր էթնոհամախմբման միջանկյալ վիճակում: Երկրամասի նկատմամբ ռուսական տիրապետության հաստատումը նպաստեց նախկինում ինքնանույնացման ցուցիչ համարվող ցեղանունների մոռացմանը: Փոխարենը՝ «մահմեդական» եզրույթը դարձավ ցարական քրիստոնեական տիրապետության պայմաններում «մենք-նրանք» հակադրության նախնական դրսևորում, որին զուգահեռ կիրառվում էին «թաթար», «կովկասյան թաթար», «թյուրք» էքզոէթնոնիմները:
2. Պարսկական գրավոր մշակույթի փոխարեն գրավոր թյուրքալեզվության գերակայությունն ապահովելու ուղղությամբ իշխանությունների բավականին ակնհայտ պատվերը էական խթան դարձավ երկրամասի մահմեդական բնակչության էթնոհամախմբման էթնոմիքսացիոն տարբերակի սահուն ընթացքի համար:

3. XIX դ. երկրորդ կեսին նոր ձևավորված մահմեդական մտավորականությունը գրավոր թյուրքալեզու գրականության և մամուլի էջերում սկսեց արծարծել սեփական ինքնության որոշարկման խնդիրները՝ կրոնական խավարամտությունից մինչև ինքնանվան փնտրտուք: Այս փուլում թյուրքալեզու մահմեդական հանրույթը կարելի է բնորոշել որպես մետաէթնո-մշակութային հանրույթ՝ տեղայնացված Արևելյան Այսրկովկասում և կրոնական ինքնության գիտակցումով:
4. 1905-1906 թթ. հայ-թաթարական բախումները, որոնք թյուրքալեզու մահմեդականների էթնոհամախմբման գործընթացում նոր փուլ նախանշեցին, բյուրեղացրին հայի՝ որպես ընդհանուր թշնամու կերպարը: Դրա շուրջ համախմբումը դարձավ անհրաժեշտ պայման, և դժվար չէ նկատել, որ այս էթնոհամախմբող գործոնն ավելի ուժգին շարունակում է գործել մինչև այսօր:
5. XX դարասկզբին բնորոշ է մտավորականության որակապես նոր խավի առաջացումը, որը նախկին խնդիրները բարձրաձայնում և քննարկում էր քաղաքական գաղափարախոսությունների ու շարժումների համատեքստում: Դրա արդյունքում մահմեդականների շրջանում հայտնված առաջին քաղաքական կուսակցություններն ունեին ե՛ւ սոցիալ-դեմոկրատական («Հյումմեթ»), ե՛ւ ազատական («Մահմեդական Միություն»), ե՛ւ ազգայնական («Հեյրաթ», «Դիֆայի», «Մուդաֆիե», «Մուսավաթ») ուղղվածություն: Ընդ որում, ազգայնական հոսանքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն կրում էր պանթյուրքականության և պանիսլամականության ազդեցությունը, ուստի չի կարող համարվել «մաքուր ազգայնականական»:
6. 1917 թ. Փետրվարյան հեղափոխությամբ և Հոկտեմբերյան հեղաշրջմամբ երկրամասում սկսված քաղաքական անկայունության շրջանում Ռուս-թուրքական Կովկասյան ռազմաճակատային գծի քայքայումը հնարավորություն ընձեռեց Օսմանյան կայսրությանը՝ կյանքի կոչելու իր պանթյուրքիստական նպատակները: Այդ իրավիճակից օգտվելով՝ Թուրքիան ուղղակի ռազմական արշավանքով և դիվանագիտական ճնշմամբ նախ՝ հասավ Այսրկովկասի անկախացմանը Ռուսաստանից, ապա նաև նպաստեց Այսրկովկասի դեմոկրատական ֆեդերատիվ հանրապետության կազմալուծմանն ու Հայաստան, Վրաստան և Ադրբեջան պետությունների շուտափույթ առաջացմանը:
7. Արևելյան Այսրկովկասում Ադրբեջան պետության ստեղծումը եղավ օտար՝ թուրքական ինտերվենցիայի ուղղակի արդյունքը: Սկզբնական շրջանում Թուրքիան նպատակ չուներ ստեղծել անկախ պետություն, և միայն Գերմանիայի հետ բարդ հարաբերություններն էին, որ թույլ չտվեցին

այդ տարածքն անմիջապես միացնել Օսմանյան կայսրությանը, ինչի ջատագովներ կային նաև այսրկովկասյան մահմեդականության շրջանում՝ ի դեմս իլիագիստների խմբավորման: Մյուս կողմից՝ «Ադրբեջան» անվան կիրառումը Արևելյան Այսրկովկասի նկատմամբ զուրկ էր պատմական օրինակարգությունից: «Ատրպատական-Ադրբեջան» պատմականորեն անվանվել է Իրանի հյուսիս-արևմտյան նահանգը, և այդ երկրանունը, ըստ էության, չհաշված ինչ-ինչ բացառություններ, երբեք աշխարհագրորեն չի կիրառվել Արաքս գետից հյուսիս ընկած տարածքի նկատմամբ: Անցյալում գոյություն չի ունեցել որևէ պետական կազմավորում, որն ամբողջությամբ ընդգրկած լիներ ներկայիս Ադրբեջանի տարածքը: Պատմական օրինակարգության ապահովման տեսանկյունից որոշակի աշխարհագրական և էթնոգրաֆիական վերապահումամբ այս նորաստեղծ պետությունը ճիշտ կլիներ անվանել Առան-Շիրվանի Հանրապետություն: Սակայն այս տարբերակը խիստ սահմանափակում էր Ադրբեջանի տարածքային ընդլայնման հեռանկարը թե՛ թուրքական ռազմա-քաղաքական հրամանատարության համար 1918 թվականին, թե՛ Ադրբեջանի կառավարության համար՝ հետագայում:

8. Ադրբեջանի ժողովրդական հանրապետության գոյության 23 ամիսները կարելի է բաժանել 3 փուլի՝ թուրքական վերահսկողության (1918 թ. մայիս – նոյեմբեր), Բաքվի անգլիական օկուպացիայի (1918 թ. նոյեմբեր – 1919 թ. օգոստոս), ինքնուրույն գոյության փորձի շրջան (1919 թ. օգոստոս – 1920 թ. ապրիլ): Ֆ. Խան Խոյսկու գլխավորությամբ նորակազմ կառավարության համար կենսական նշանակություն ուներ Բաքվի գրավումը, ինչն անհնար էր առանց թուրքական բանակի մասնակցության: Այսօր թուրքական բանակի արշավանքը թուրք-ադրբեջանական գրականության մեջ մեկնաբանվում է որպես եղբայրական օգնություն՝ ընդդեմ Բաքվի դաշնակա-բոլշևիկյան ուժերի, սակայն թաքցվում են իրական նպատակները՝ Բաքվի նավթը և ճանապարհը դեպի Կենտրոնական Ասիա ու Ռուսաստանի՝ մահմեդականներով բնակեցված շրջաններ: Սեպտեմբերի 15-ին Բաքվի գրավմանը հաջորդեց շուրջ 30 հազար հայության եռօրյա կոտորածը: Սա հակահայկականության առաջին պետականահեն դրսևորումն էր: Ուստի սխալված չենք լինի, եթե պնդենք, որ այս պետության հիմքում ընկած է էթնիկ զտումների շարունակական պրակտիկան:

9. Թուրքական ռազմա-քաղաքական ղեկավարությունը «օկուպացրեց» Ադրբեջանի կառավարումը բոլոր առումներով: Նույնանման դրսևորումներ ունեցավ նաև անգլիական օկուպացիան, իսկ անկախ գոյության վերջին ամիսները բնորոշվեցին ներքին կառավարական ճգնաժամերով և

արտաքին վտանգների մշտական առկայությամբ (Սպիտակ բանակ, բոլշևիկյան Ռուսաստան): Անգամ Փարիզի վեհաժողովի կողմից Ադրբեջանի անկախության դե-ֆակտո ճանաչումը գործնական աջակցություն չապահովեց բոլշևիկյան վտանգի դեմ: Այս ամենը անհնար դարձրին դիմադրությունը 11-րդ Կարմիր բանակին:

10. Ադրբեջանի խորհրդայնացումը խորհրդային իշխանության՝ նախկին Ռուսական կայսրության սահմանների վերականգնման ձգտման հետևանքն էր: Գոյություն ուներ խորհրդա-թուրքական հեռակա համաձայնություն ևս: Այդպիսով Ադրբեջանը ներառվեց խորհրդային պետության և գաղափարախոսության տիրույթում: Դրանից հետո յուրաքանչյուր հարց դիտարկելի է խորհրդային իշխանության ներքին և արտաքին առաջնահերթությունների համատեքստում: Հենց այդպես է ընթացել ադրբեջանցի էթնոսի կազմավորման գործընթացը 1920-1930-ական թթ.: Այն մեծապես կախված էր խորհրդային իշխանության՝ ազգային հարցի և ազգային քաղաքականության նկատմամբ ունեցած մոտեցումներից և դրանց փոփոխությունից:

11. Խորհրդային ազգային քաղաքականությունը քննարկվող ժամանակահատվածում կարելի է բնորոշել հետևյալ փուլերով՝ էթնիկացում, ինտերնացիոնալացում և կոնսոլիդացում (համախմբում): Էթնիկացման շրջափուլին բնորոշ է կորենիզացիայի (բնիկացման) քաղաքականությունը, ինտերնացիոնալացմանը՝ հրաժարումը էթնոկենտրոնությունից, իսկ կոնսոլիդացման արդյունքում ավարտվեց Խորհրդային Միության էթնոտարածքային բնույթի ամբողջացումը: Դա նշանակում է, որ որևէ վարչա-քաղաքական միավորի անվանումը՝ միութենական հանրապետությունից մինչև ինքնավար շրջան, պիտի կապվեր տվյալ տարածքում բնակվող տիտղոսակիր էթնոսի հետ: Նման անհամաձայնություն կար միայն Ադրբեջանի պարագայում, երբ պետության անվանումը չէր բխում բնակչության մեծ մասի ինքնանվանումից:

12. Պրոթուրքական տրամադրությունները Խորհրդային Ադրբեջանում շարունակվեցին ամբողջ 1920-1930-ական թթ.: Ավելին՝ հակախորհրդային բոլոր ելույթներն ունեին այդպիսի գաղափարախոսություն: Դրանք արտահայտվում էին ինչպե՛ս հասարակ գյուղացիության, այնպե՛ս էլ մտավորականության շրջանում: Մուսավաթ կուսակցության վտարանդի գործիչները ևս խրախուսում էին դրանց տարածումը, մինչդեռ խորհրդային իշխանությունը խստորեն դատապարտում էր՝ ենթարկելով բռնաճնշումների: Խորհրդային իշխանությունը նաև հասկանում էր, որ անհրաժեշտ է վերակերպել Ադրբեջանի թյուրքերի ինքնությունը:

13. 1920-ական թթ. ազգակառուցման գործընթացները ԽՍՀՄ-ին հարևան երկու մերձավորարևելյան երկրներում՝ Թուրքիայի Հանրապետությունում և Իրանում ևս ազդում էին Ադրբեջանում ինքնանվան խնդրի վրա: Թե՛ Ադրբեջանում, թե՛ Թուրքիայի Հանրապետությունում բնակչությունը կրում էր նույնանման անվանում՝ türk: Վատթարացող խորհրդա-թուրքական հարաբերությունների պայմաններում դա անընդունելի էր դիտվում: Մյուս կողմից՝ Իրանի հյուսիսի թյուրքախոս բնակչությունը թիրախավորվում էր Ռեզա շահի պանիրանական գաղափարախոսության կողմից որպես թյուրքերենը փոխառած արիացիների՝ իրանցիների: Նման վտանգները ստիպում էին փնտրել Ադրբեջանի տիտղոսային բնակչության արմատները տեղում՝ նրան արհեստականորեն վերածելով բնիկների:
14. Արդյունքում՝ 1937 թ. Խորհրդային Ադրբեջանի սահմանադրության մեջ հիշատակվեց «ադրբեջանցի ժողովուրդ» եզրույթը, իսկ 1939 թ. համամիութենական մարդահամարով Ադրբեջանի տիտղոսակիր ժողովրդի ներկայացուցիչները (նաև Խորհրդային Հայաստանի և Խորհրդային Վրաստանի թյուրքախոս մահմեդականները) ստացան «ադրբեջանցի» անվանումը: Քանի որ ինքնանվանման (էթնոնիմի) ստեղծումը բազմաթիվ ազգագրագետներ համարում են էթնոսի կազմավորման ավարտի նշան, ապա տեսականորեն կարելի է համաձայնել, որ դրանով որոշակիորեն ավարտուն տեսք ստացավ ադրբեջանցի էթնոսի կազմավորումը: Հաջորդած գործընթացներում այդ ինքնանվանումը դեռ պիտի ամրապնդվեր ու ընկալելի դառնար բնակչության համար՝ անցյալի արհեստական ադրբեջանականացումով, քանի որ դեռ երկար ժամանակ բնակչության որոշ շերտեր շարունակում էին կրոնական ինքնանույնացման պրակտիկան: Փաստորեն՝ տեղի ունեցավ թյուրքական ինքնության վերանվանում, տեղայնացում Ադրբեջանի տարածքում և այդ տարածքի պատմության ու մշակույթի ադրբեջանականացում՝ յուրացում:
15. Ադրբեջանական ինքնության ձևավորումը, փաստորեն, տեղի ունեցավ ոչ թե վարից՝ ժողովրդի գիտակցումից, այլ ընդհակառակը՝ պարտադրվեց վերից, ինչն էլ պայմանավորում է այդ ինքնության չափազանց քաղաքականացված լինելը, հետևապես և՝ մասնակի հարափոփոխությունը: Առհասարակ, ազգային ինքնությանը բնորոշ է պայմանական անկայունությունը, երբ երկարաժամկետ հեռանկարում որոշ հատկանիշներ կարող են թուլանալ, մոռացվել կամ ուժեղանալ ու շեշտվել: Եւ հենց այդպես՝ վերջին մի քանի տասնամյակներում մենք ականատես ենք եղել ծագման մասին ադրբեջանական մոտեցումների շարունակական փոփոխությանը, որն այսօր ձեռք է բերել ագրեսիվ կեղծ

իռեդենտիստական էթնո-ազգայնական բնույթ: Այդ տեսությունները ժամանակի ընթացքում ադրբեջանական արդի պատմագրությունը «համադրել է»՝ ձևավորելով մի արհեստական պատկերացում խեղված ինքնության մասին, որի հիմքը ադրբեջանցիների՝ հնագույն և բնիկ ժողովուրդ լինելու գաղափարն է, անցյալի պետությունների, հարևան ժողովուրդների մշակույթի, պատմության ադրբեջանականացումը, խեղաթյուրումը և յուրացումը: Այս ամենը բացատրելի է երիտասարդ պետություն և նորակազմ էթնոս լինելու բարդույթով՝ ի հակադրություն քաղաքակրթական մեծ ավանդ ունեցող հարևանների: Էթնոկոնսոլիդացնող մի վերջին գործոն կարելի է համարել նաև Արցախյան հարցը, Արցախյան առաջին պատերազմում կրած պարտությունը և 44-օրյա պատերազմում ունեցած հաջողությունը: Ընդ սմին, մենք հակված չենք կարծել, թե խորհրդային և հետխորհրդային տարիներին պետականորեն իրականացված այս քաղաքականությունը չի ունեցել սպասված արդյունքը: Այսօր լինելով թյուրքականության ջատագով, ունենալով տեղայնացված-ադրբեջանականացված թյուրքական ինքնություն՝ ադրբեջանցիները, այնուհանդերձ, իրենց տարբերում են թյուրքական աշխարհի մյուս բոլոր ժողովուրդներից:

**Հավելվածում** սխեմատիկ կերպով ներկայացված է ադրբեջանցիների էթնոգենեզը՝ Մ. Կրյուկովի առաջարկած սխեմայի հիման վրա՝ որոշ փոփոխություններով:

**Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.**

1. Հարությունյան Ա., Հայ-թաթարական ընդհարումները և Արևելյան Այսրկովկասի մահմեդականների շրջանում ինքնության նոր դրսևորումները, – Մերձավոր Արևելք. պատմություն, քաղաքականություն, մշակույթ, 2021, էջ 212-223:
2. Հարությունյան Ա., Արևելյան Այսրկովկասի մահմեդական բնակչության էթնոհամախմբման ընթացքը XIX դարի II կեսին գրավոր թյուրքալեզվության հիմքի վրա, – «Կովկասյան տարածաշրջան. պատմություն, քաղաքականություն, մշակույթ» հոդվածների ժողովածո, 2022, էջ 186-190:
3. Հարությունյան Ա., Խորհրդային Ադրբեջանի տիտղոսակիր ժողովրդին «ադրբեջանցի» անվանելու հարցի մասին, – «Լրաբեր հասարակական գիտությունների», 2022, № 3, էջ 122-138, DOI: 10.53548/0320-8117-2022.3-122

4. Հարությունյան Ա., Էթնիկ դասակարգման սկզբունքները՝ ըստ 1926 թ. առաջին համամիութենական մարդահամարի (Խորհրդային Հայաստանի օրինակով), – ՊԲՀ, 2022, № 3, էջ 47- 61, Doi:10.54503/0135-0536-2022.3-47
5. Հարությունյան Ա., Արևելյան Այսրկովկասի մահմեդականների շրջանում առաջացած քաղաքական հոսանքները XX դարի սկզբին, – «Պատմություն և մշակույթ», 2022 № 1 (17), էջ 118-134, https://doi.org/10.46991/hc.2022.17.1.118
6. Harutyunyan A., The geopolitical conditions of the emergence of the Democratic Republic of Azerbaijan (1918): a brief overview, FUNDAMENTAL ARMENOLOGY № 1 (17), pp. 6-19, 2023, DOI: 10.54503/1829-4618-2023.1(17)-6
7. Harutyunyan A., Some Issues about the demography of the Nagorno-Karabakh Autonomous Region and Kurdistan Uezd (in the 1920s): Short overview, Proceedings of the History Museum of Armenia № 1(11), pp. 66-72, DOI:10.56653/18290361-2023.11-66
8. Harutyunyan A., The ethnic structure of Soviet Azerbaijan (based on the materials of agricultural census of 1921, – «Bulletin of the Institute of Oriental studies», Vol. III, issue I, pp. 147-160, DOI: 10.52837/27382702-2023.3-147

**АРУТЮНЯН АНУШ АВЕТИКОВНА**

## СОЗДАНИЕ НАРОДНОЙ И СОВЕТСКОЙ РЕСПУБЛИК АЗЕРБАЙДЖАНА И ПРОЦЕСС ФОРМИРОВАНИЯ АЗЕРБАЙДЖАНСКОГО ЭТНОСА В 1920-1930-Х ГОДАХ

Диссертация на соискание учёной степени кандидата исторических наук по специальности 07.00.02 – «Всемирная история».

Защита состоится 25 декабря, 2023 г., в $14^{30}$, на заседании специализированного совета 006 “Всемирная история”, действующего при Институте востоковедения НАН РА, по адресу: 0019, Ереван, пр. Маршала Баграмяна, 24/4.

### РЕЗЮМЕ

Данное исследование посвящено изучению проблемы создания народной и советской республик Азербайджана и процессу формирования азербайджанского этноса в 1920-1930-х годах.

Диссертация состоит из введения, четырех глав, заключения, списка использованных источников и литературы и приложения.

**Во введении** обоснована актуальность исследования, представлены его цели и задачи, научная новизна, хронологические рамки, методологическая основа, проанализированы использованные источники и литература.

В **первой главе** – «Процесс этноконсолидаци тюркоязычного мусульманского населения Восточного Закавказья в XIX веке и в начале XX века: Краткий обзор», изложены те основные факторы, которые обусловили активную фазу этноконсолидации среди тюркоязычного мусульманского населения Восточного Закавказья: установление российского правления, возникновение новой интеллигенции, создание письменной тюркоязычной литературы и прессы, армяно-татарские столкновения, возникновение политических течений.

**Вторая глава** озаглавлена «Азербайджанская народная республика (1918-1920 гг.)». В нём обсуждаются геополитические условия создания государства под названием Азербайджан в Восточном Закавказье, в том числе характер турецкого и британского контроля, внутренние и внешние проблемы. В целом была предпринята попытка найти ответы на вопросы, было ли правомерно использование названия Азербайджан, насколько самостоятельным и жизнеспособным было это новое государственное образование.

**Третья глава** диссертации озаглавлена «Азербайджанская советская республика в 1920-1930-е гг.». В этой главе проанализирован процесс советизации Азербайджана, а также ее внешнеполитическая роль для советского правительства в контексте экспорта революции на Восток. Также были рассмотрены антисоветские выступления в Азербайджане в 1920-1930-е годы, их причины, идеология, центры управления.

**В четвертой главе** – «Процесс формирования азербайджанского этноса в 1920-1930-е годы», изучен этнический состав населения Советского Азербайджана в 1920-1930-х годах. Большое внимание уделено также проблеме изменения советской национальной политики и ее принципов в течении 1920-1930-х годов. На основе сочетания вышеуказанного, а также влияния ряда внешних факторов (политика национального строительства в Турецкой Республике и Иране), произошли национализация и закрепление этнонима азербайджанцы как название титульного народа Советского Азербайджана.

**В заключении** подведены итоги проведенной работы и изложены основные выводы исследования.

**В приложении** представлен этногенез азербайджанцев по схеме, составленной М. Крюковым, с некоторыми изменениями.

**HARUTYUNYAN ANUSH A.**

**CREATION OF THE PEOPLE'S AND SOVIET REPUBLICS OF AZERBAIJAN AND THE PROCESS OF FORMATION OF THE AZERBAIJANI ETHNOS IN THE 1920-1930S.**

Dissertation for the degree of the Doctor of History on the specialization of "World History" 07.00.02.

The defense of the dissertation will be held on $14^{30}$, on 25 December of 2023, at the session of the Specialized Council 002 on World History of SQC RA by the Institute of Oriental Studies of the National Academy of Sciences of RA (0019, Yerevan, Marshal Baghramyan Avenue 24/4).

**SUMMARY**

The PhD thesis is devoted to studying the problem of creating the people's and Soviet republics of Azerbaijan and the process of formation of the Azerbaijani ethnos in the 1920-1930s.

The dissertation consists of an introduction, four chapters, conclusions, bibliography and an appendix.

**In the introduction**, the importance and relevance of the study is substantiated, its goals and objectives, scientific novelty, chronological framework, methodological basis are presented, used sources and literature are analyzed.

**In the first chapter** "Process of ethnoconsolidation of the Turkic-speaking Muslim population of Eastern Transcaucasia in the XIX century and in the beginning of the XX century: A brief review", are outlined the main factors that led to the active phase of ethnoconsolidation among the Turkic-speaking Muslim population of Eastern Transcaucasia: The establishment of Russian rule, the emergence of a new intelligentsia, the creation of written Turkic-speaking literature and press, Armenian-Tatar clashes, and the emergence of political currents among Turkic-speaking Muslims.

**The second chapter** is entitled "Azerbaijan People's Republic (1918-1920)". It discussed the geopolitical conditions for the creation of a state called

Azerbaijan in East Transcaucasia, including the nature of Turkish and British control, internal and external problems. In general, an attempt was made to find answers to the questions of whether the use of the name Azerbaijan was legitimate and how independent and viable this new state formation was.

**The third chapter** of the dissertation is entitled "Azerbaijan Soviet Republic in the 1920s-1930s". This chapter analyses the process of Sovietisation of Azerbaijan and its foreign policy role for the Soviet government in the context of exporting the revolution to the East. Anti-Soviet protests in Azerbaijan in 1920s-1930s, their causes, ideology, control centres, etc. were also analyzed.

**In the fourth chapter** "The process of formation of the Azerbaijani ethnos in the 1920s-1930s". The chapter examines the ethnic composition of the population of Soviet Azerbaijan in the 1920s-1930s. Much attention was also paid to the problem of changes in the Soviet national policy and its principles during the 1920s-1930s. Based on a combination of the above, as well as the influence of a number of external factors (the policy of nation-building in the Republic of Turkey and Iran), there was nationalization and fixation of the ethnonym Azerbaijani as the name of the titular nation of Soviet Azerbaijan.

**In the conclusion**, the main results of the thesis are summarized.

**The appendix** presents the ethnogenesis of Azerbaijanis according to the scheme of ethnogenesis drawn up by M. Kryukov, with some changes.